

ՏԱԼԻՍԻՆՅԻՆ ԼԵՉԻՆԱ ՔԱՂԱՔԸ

(Տես էրես 168-169:)

Տալմանցիոյ քաղաքաց մէջ զրից գեղեցկութեանը կողմանէ շատ նշանաւոր է Լեզինա քաղաքն, որ Ազրիական ծովուն մէջ համանուն կղզոյն զլխաւոր տեղին է: Թէպէտ շուրջանակի լեռներ պատած են, բայց ուրիշ տեղեաց պէս վայրենի, լերկ, սեպացեալ և անհաճոյ տեսք մը չեն ընծայեր տեսողաց, այլ ընդհակառակն ծովէն սկսեալ ախորժական և նկարուն ստորոտ մը, զիւրեքանելի կողեր, ելեկներ ու ծաղկեալ այգիներ կը պարզուին աչաց:

Լեզինա քաղաքը հին ատեն փարիս կը կոչուէր, և մինչև ցայսօր քաղքին հարաւային արևմտեան զին եղած գեղեցիկ նաւահանգստին առջև՝ բարձրացած փոքր ժայռ մը կայ, որ նոյն անուամբ կը կոչուի:

Երկու բերդ ունի. Սպանիական բերդ՝ որ մեծն է, և Սան Նիգոլայի բերդ՝ որ փոքրն է:

Տեղացիք հասարակօրէն նաւաղինութեան, ձկնորսութեան, այգեգործութեան ու պտղալվաճառութեան կը պարապին:

Այս կլիմային տակ արմաւենի կ'աճի, և հարաւագոյն եղած երկիրներուն բուսոց պտուղները կը հասնին. և բուսաբանն կրնայ գտնել այս տեղ եւրոպիոյ սակաւագիւտ տնկոց ճոխ հաւաքում մը: Ինքնաբոյս կ'աճի խնկունին (Rosmarino), և այնչափ առատութեամբ որ տեղացիք իրենց անուանի acqua aromatica della regina ըսուած ըմպելիքին շինութեան կը գործածեն, որով մեծ տուրեալ կ'ընեն զրեթէ բուրբ աշխարհիս ամեն կողմանց հետ, մանաւանդ խաալիա և Արևելք: Կը շինեն նաև miele di rosmarino ըսուածն, որ անուշահոտ և քաղցրահամ է: Բաց ասանցմէ բոլոր կղզին աղնիւ զինի կը բերէ:

Քաղաքը շատ և նշանաւոր շէնքերով զարդարուած է. գեղեցիկ հրապարակ մը ունի, որ Piazza Grande կ'ըսուի. և Loggia կոչուած պալատը, որ հին ժամանակէ մնացած է, գեղեցիկ ճարտարապետութեամբ շինուած, որուն արուեստագէտն է Սանմիքէլէ անունով վենետկեցի համբաւաւոր ճարտարապետն, ուր կը նստէր Ազնուական Խորհրդարանը (Consiglio Nobile): Այս պալատս շատ վնասուեցաւ 1806ին Ռուսաց թնդանօթներէն: Փառաւոր է նաև Մայր եկեղեցին, և ընդարձակութեան կողմանէ նշանաւոր է նաև վեղարաւորաց մէկ վանքը:

Տեղացիք բնութեամբ կիրթ, հիւրասէր և ազնուարարոյ են ու զուարթ, կը սիրեն երգ և պար: Շատ մարդասիրութեամբ կը վարուին օտարականաց հետ, և կը ցուցնեն անոնց ախորժանօք՝ իրենց հայրենի երկրին գեղեցկութիւնները:

Զ Ա Ն Գ Ա Կ Ն

Գերմանացոց գերագոյն քերդողն Շելլէր՝ անձանօթ չէ մեր բանասէր ազգայնոց, որուն համառօտ կենսագրութիւնն ալ հրատարակուած է (Նազմափիսիս մէջ (1851. էր. 9), հանդերձ իր մէկ ընտիր քերդուածովը: Ահաւասիկ հիմա նոր ճաշակ մ'ալ Շելլէրի բարձրաթոյն հանձարոյն, մեծահրաշակ և անմահական քերթուածն ի Զալգակն, թերևս գերազանց իր քնարերգութեանցը մէջ, եւրոպական ամեն լեզու թարգմանեալ, և շատ բանաստեղծից ալ երգի նիւթ մը եղած. բայց ոչ որ Շելլէրի հաւատարած է, և ոչ ալ թարգմանութիւնք միշտ հաւատարիմ եղած են: Անոր համար մենք ջանացինք ըստ կարի գերմանացի բնագրին զուգընթաց երթալ, զրեթէ նոյն չափով և նոյն ոտքով, վայելչաբանութեանէն աւելի ճշգրտեան ու շունչով, առանց իմաստները յապաւելու կամ աւելցնելու. ասոր համար յուսանք ներողութիւն գտնել իթէ տեղ տեղ մութ երեկ իմաստն, մինչ ընագիրն ալ բաւական մութ է իր կարճ տողերովը:

Ողջոյ էմ կոչնակ .
Մեռելոց ողբակ .
Կայծականց խորտակ :

Որմնապատեալ պինդ 'ի գետնի
Կտաթուրժ ձոյլըն խոր զընի .
Երևեսցի այսօր զանգակ :
Հապա ընկերք , ժիր 'ի վաստակ :
Ձերմ 'ի ճակատուէ
Քիրտըն կաթեցէ .
Գործքըն գովեն ըզգործօն ,
Այլ երկինք տան զօրհնից ձօն :

Առ այսքան մեր խնամով ձեռնարկ'
Խնամով և բան կարգել է հարկ .
Թէ ճառք բարիք ընդ այն անկցին ,
Չուարթութեամբ գործք յառաջ վարին :
Օ՛ն արդ տեսցուք ուշիւ ուշոյ'
Չինչ ծագեսցէ 'ի դոյզն ուժոյ :
Գրեսցի խոտան և այր վատթար ,
Որ ոչ խորհի զգործոյն կատար :
Պարտ և պատշաճ իսկ է մարդոյ
Որում տըւան ձիրք հանճարոյ ,
Ի խորս սըրտին քաջիկ քըննել
Չոր ըստեղծու ձեռօքն ընտել :

Ազէ , առ փայտ ըզբուն շոճի ,
Այլ տևս զի քաջ ցամաք լիցի .
Որպէս զի բոցն ընդոստ յահուր'
Մըտցէ 'նդ երակսըն զարամուր :
Եռան եռք պըզընձին .
Տուք զանագն ընդ նըմին ,
Չի զանգակին կարծըր խառնուրդ
Յօրինաւորն հոսեսցի ուրդ :

Չոր ի խորուջ փոսակիս արդ
Ի ձեռն հըրոյ ճարտարէ մարդ ,
Ի բարձրավայր զանգակատան ,
Արձանասցի վկայ մեծաբան .
Կացցէ միասցէ և յապագայն
Յունկըն մարդկան արկանել ձայն .
Գու ողբակից սըզաւորաց
Եւ երգակից ընդ անմեղաց :
Երկրածընացըս դէպք յուրով
Չոր բախան ածցէ զիւրահոլով ,
Բաղխեալ ընդ շուրթըն մետաղեայ
Հընչեսցեն քաջ ի բացեսայ :

Տեսանի արդ ձերմակ փըրփուր :
Ուրեմն հալին քըծուարքն ի հուր .
Օ՛ն , խառնեցէք յայն զալբալի ,
Չի եւս երազ երազ հալի :

Ի զանգուածոյն՝ ս՛ն անդր ի բաց
Բարձցի փըրփուրըն թանճրամած ,
Չի զըտագոյն մետաղն այն
Յըստակ տայծառ տացէ ձայն :

Ի հըրճուանաց ձայն ողջոյն տայ
Առ սիրունակն արդ . տու տըզայ'
Յառաջին քայլ նորուն կենաց ,
Որ ի վերայ քընոյն բազկաց .
Չորոյ պահէ դեռ ժամանակ
Ի ծոց իւր՝ բաղդ սեւա ու սպիտակ .
Սէր մայրենի խնամօք աղու՝
Հըսկէ յոսկեակ նորին տըզու :
Սահին սրավար ամբ նետաչու :
Պատանի խրոխտ լըքեալ ըզբորս՝
Մըլի կենաց յախուռն ի խորս .
Յուպ ի ձեռին չափեալ զաչխարհ ,
Դառնայ ի տուն հօրն իբր օտար :
Ի մանկական վառեալ արբուն՝
Իբր երկնային պատկեր համբուն
Տեսանէ զկոյս պարկեշտագեղ ,
Հանդէպ կալով ցածուն ու աչեղ :
Տենչումն անճառ անդ յանկարծոյն
Հարեալ զբաւէ զսիրտ պատանւոյն .
Թողեալ զընկերց խուռն երախան ,
Յածի մեկնակ և լալահան .
Եւ պատկառէ և խնդրէ զնա .
Թէ ողջունին արժանանայ՝
Յուզէ զճաղկանց չըքնողագոյն ,
Ի զարդ ի պսակ իւր սիրուհոյն :
Ո՛վ յոյսք քաղցունք , տենչք խանդակաթ ,
Նախկին սիրոյ ժամբ ոսկէհատ .
Երկինք՝ բացեալք թըլին աչաց .
Սիրտ պարարի յուղիս հըրճուանայ :
Իցիւ թէ միայր միշտ անթառամ
Առոյգ սիրոյ չըքնաղըն ժամ :

Տեսէք , զիարդ փողք թըխանան .
Մխեսցուք ի ներքս ըզգաւազան .
Եթէ թացեալ և փայլեսցէ ,
Չուրմանըն ժամ հասեալ իցէ :
Հապա ընկերք , ժիր ի վաստակ ,
Փորձել ըզճոյլըդ զայդ խառնակ ,
Թէ զուգեսցի կարծր ընդ կակղին ,
Տալ մեղ նըշան թէ յաջողին :

Չի ուր հըզօր ընդ փափկին
Եւ խառնի մեղմն ընդ ուժղին ,
Անտի ծնանի ձայն ներգաշնակ :
Եւ որ խընդրէ կասլի անքակ ,
Փորձեսցէ զօրտ սըրտին օճան :

Զի ցնորքն են կարճ, զեղջն՝ անվախճան :
 Ի հոպոպիս նորահարսին
 Չբքնաղ խաղայ պըսակ կուսին ,
 Թէ ջինջ զանգակը ի տաճարէն՝
 Յըղճային յայն տօն հրաւիրեն :
 Ո՛հ. զեղանին յաւուրս կենաց՝
 Կենաց զարնան է կատարած .
 Եւ ընդ քօղոյ և ընդ գօտուոյն՝
 Բառնին ցընորքըն գեղապոյն :
 Խանդ կըրիցն հեռանայ ,
 Թէ եւ սէր կայ մընայ :
 Վայելք ծաղկին վաղ և սուղ ,
 Այլ հասանէ զհետ պըտուղ :
 Հարկ է մարդոյ թողուլ ըզտուն
 Մըրցիլ յալիս կենաց ծովուն ,
 Հարկ է գործել և ճըգնել
 Տունկ արկանել և շինել .
 Տընիլ ձկտիլ դիմել պատրաստ
 Աւ հայթհայթել յաջող իւր բաստ :
 Առատապէս բարիք զեղուն ,
 Արդոյ արդեամբք համբարը լընուն ,
 Աճեն անդը , տունն ընդարձակի ,
 Եւ առտընին՝ ժիր վաստակի
 Ամուսինն ողջախոհ ,
 Արդ մանկանց լեալ ծընող .
 Գերդաստանին տընկալուչ
 Յարդարէ զբնաւ վայելուչ .
 Հրահանգէ զգըստերս
 Եւ խրատէ զուստերս ,
 Յամեն մըխէ իր
 Զձեռսըն ժիրաժիր .
 Եւ յաւելու շահից նըպաստ
 Տնտեսութեամբ նորուն ըզգաստ .
 Գանձիւ լընու արկիլ հոտաւէտ
 Ճոնչող գործուոյն թելոցն ի հետ .
 Ժողովէ ջինջ ի զարանակ
 Զասուին փայլուն ձիւնաբատակ .
 Յըղկեալ կոկէ զբարին և լաւ ,
 Ու ի գործելոյ չըկասէ բնաւ :

Իսկ տանուաէրըն զուարթ անդէն ,
 Շըջադիտակ ի պաշտգամէն
 Քըննէ զկալուածս իւր բարեբաստ .
 Զամբարձածիք ծառոց դարաստ ,
 Տաղաւարօք ծածկեալ սահմանս ,
 Օրհնիւք զեղուն զըշտեմարանս ,
 Եւ ցորենոյն զալիս ծըլման :
 Անձնահաճոյ բանայ բերան .
 « Որպէս երկրի անշարժ հիմանց
 Զիք ինչ երկիւղ ի բըռնութեանց ,
 Դոյնպէս և տանս իմ երջանիկ » :

Այլ ընդ բաղդին բըռնամարտիկ
 Կըռեալ դաշինքն՝ են կեղակարծք .
 Վաղ հասանեն աղէտք ու արկածք :

Ժամ է սկիզբն արդ տալոյ հոսման .
 Ահա նըշանք և պատառման :
 Այլ չե հոսեալ , օն ջերմն ուխտիւք
 Եկայք աղօթըս մատուցուք :
 Վերացուցէք ըղխիցն ի բաց :
 Պահեա՛ նվթաանդ զտունս այս , Աստուած :
 Զիարդ շըչեալ խոտորն ընդ փոս
 Զեռայ հրաշէկ և ալէհոս :
 Հուր բարեբար է զօրութեամբ ,
 Թէ մարդ վարէ արկեալ ըզբոամբ ,
 Եւ զօր շինէ և զօր ստեղծուն ,
 Է՛ երկնածիր ուժով սորուն :
 Այլ ձիրդ երկնից ահեղ է յոյժ ,
 Թէ կոտորեալ զկապանսն անժոյժ՝
 Աղատասուն բնութեան դուակ ,
 Յուկամ վազէ գնայ համարձակ :
 Եւ , վա՛հ , թէ զերծ և անարգել
 Թողեալ լիցի աճել վարգել ,
 Կոհակակոյտ խանձիւք բոցոյ
 Ընդ արահետ բաղմամարդոյ .
 Զի ատելի է տարերաց
 Ճարտարութիւն մարդոյս ձեռաց :
 Յամպոց երկնից օրհնածիր
 Ուղիք անձրեաց տեղան ցիր .
 Յամպոց երկնից անխըտիր
 Ճառագայթէ նըշոյլ ժիր :

Անդ ի բարձուէ աշտարակին
 Լըսեմք զվանգիւնըս զանգակին :
 Դա փոթորկի է նըշանակ .
 Շիկնին երկինք արեան գունակ .
 Ո՛չ , չէ՛ այդ շուք տըլընջնի .
 Ո՛հ , ի փողոցս աղմուկք բանի :
 Ծուխ ծառացեալ յայերս յահուր
 Ընդ պողոտայս բոց ընդ հանուր .
 Զայրանալով հողմոյ փըշմամբ
 Իբր ի հնոցէ բոց ապըստամբ ,
 Օդք շառագնին , հեծանք ճըրնչեն ,
 Փրթին մարդակը , լուսանցք կըրնչեն ,
 Ճըչէ մանկտին , տաղնապին մարք .
 Ընդ փլատակօք մըրնչեն պաճարք .
 Համայն շտապի , խուսէ , փախչի ,
 Այգըն պայծառ ի ցայդ թաքչի :
 Զեռաց ի ձեռս շղթայաշար
 Յածի դոյլիկն անդ անդադար .
 Կամարաձե ի վեր ըշտապ
 Սըրսկեն ջըրհանք զալեաց տարափ :

Ղեպի մըրըրիկն այն ամեհի ,
 Համաճարակ զհետ հըրդեհի ,
 Որոտընդոտտ հարեալ լափլէզ ,
 Բզշոր հեծանս , ըզմիրգս և դէզ .
 Կամելով իմըն յարհաւիրս՝
 Յափըշտակեալ ընդ իւր զերկիրս՝
 Տանել հանել յերկնից սահման ,
 Աճէ ի գնալն՝ հըսկայանման :
 Անձեռնհաս առ դիցըն սաստ
 Յուսարեկեալ մարդըս նըւաստ ,
 Տեսանէ զերկս իւր զեղծ խանգար ,
 Եւ զարմացեալ կայ վայրապար :

Այրեացաւեր եղև տեղին ,
 Մոլի մըրըրկաց կարծր անկողին .
 Լուսամբտից յունայն փորոզ
 Արդ արհաւիրք դարանին լոկ ,
 Եւ ամպք երկնից ի բարձանց
 Կարկառին անդըր թափանց :

Մարդ՝ ի վիրապն ամենակուլ
 Բնչից իւրոց՝ դառնայ պըշնուլ .
 Յուպ ի ձեռին դիմէ շտապաւ ,
 Միթէ՞ ծախեաց հրգեհն ըղբնաւ : . . .
 Բսփոփանք կաթոգին ,
 Կան մընան դեռ նըմին .
 Համարէ զգլուխըս սիրելեաց ,
 Ողջ են գլուխք . ոչ ոք պակասեաց :

Կաղմակերպեալ հողոյն ի խաւ
 Յաջողապէս ձեւըն լըցաւ :
 Դայցէ՞ արդեօք ի լոյս երազ ,
 Պսակել զարուեստն և ըզվաստակ .
 Թէ անյաջող ձուլումն իցէ
 Եւ կաղապարըն պայթիցէ .
 Ա՛հ . դուցէ մեր ի յուսով կալ՝
 Մերձենայ վտանգ դարանակալ :

Ի մույլ երկրիս նուիրական ծոց
 Տամբ ի յուանդ ըզձեռաց գործ .
 Սերմն արկունէ սերմանահան
 Յուսով արդեանցըն շահեկան ,
 Բոտ օրհնութեան վերին կամաց :
 Ազնուազոյն սերմն և մարդ ցուած՝
 Ծածկէ ի հող . ու ի դագաղէ՝
 Բոյս գերազոյն յուսով քաղէ :

Յեկեղեցւոյն հնչէ զանգակ
 Ահեղ և վեհ դամբանանուագ ,
 Բնկերելով զանչիւ տըխուր
 Ուղեորի հուսկ յուղին իւր :

Ա՛խ . նա հարսն է տարիալի ,
 Ա՛խ . նա մայր է ցանկալի .
 Զոր սեաւ իշխանն այն ըստուերաց
 Ի փեսայէն կորդէ ի բաց ,
 Եւ յորդեկաց մատաղաբոյս ,
 Զոր ծաղկաբար էածն ի լոյս ,
 Եւ մայրականըն գըգուանօք
 Զնընէր աճել սիրունն ի գոգ :
 Ա՛խ . տանըն զօգք գեղեցկահիւս
 Այսուհետեւ լուծան անյոյս .
 Զի որ տիկին երբեմն էր տան՝
 Արդ ի յերկրի կայ ստուերական .
 Ոչ ևս յառնէ ի գործ յօժար ,
 Ոչ ևս հըսկեն խնամքն անդադար :
 Հրաման տացէ արդ յամային
 Անկարեկիր եկամուտ կին :

Արդ ցըպաղել զանգակին՝ դուք
 Ի վաստակոցըդ հանգերուք .
 Եւ որպէս հաւք յոստոց ի թառ՝
 Առջիք և դուք հաճոյ դադար .
 Մինչ աստեղաց ակնարկէ լոյս՝
 Յառհասարակ հոգոց տալ խոյս .
 Զերեկորեայն ժամուն հրաւէր
 Սպասէ մըշակն , այլ ոչ իւր տէր :

Ի թաւ մայրեաց հեռաւոր
 Փութայ շտապէ ուղեւոր ,
 Ի հայրենին իւր տաղաւար :
 Բառաչելով դառնան ոչխար
 Եւ արջառոց լայնաճակատ
 Նախիրք՝ ի գոմըն հարազատ :
 Յորենաբարձ սայլ
 Ճորնչէ յամրաքայլ .
 Շեղջաչեղջ ի հասկ
 Պաղպաղեն պըսակք ,
 Եւ հընձողք կայտառ
 Կաքաւեն ի պար :
 Փողոցք և շուկայք
 Դադարեն լուկայք .
 Զհամբոյր բոցով կանթեղին
 Յարկարընակքն ակըմրին ,
 Եւ գրունք քաղաքին
 Դգըրդելով փակին :
 Ծածկի երկիր թուխ խաւարաւ .
 Այլ քաղաքաց երկիւղ չիք բնաւ
 Թէ զարթնուն չարք ի գիշերի .
 Քանզի հըսկեն օրէնք բարի :

Կարդ սըրբանուէր օրհնապատար ,
 Դըստրիկ երկնից , որ զհաւասարս

Չուզէ ազատ և խնդամիտ ,
 Եւ քաղաքաց շինման ատիթ ,
 Որ ըզվայրազ չարաբաստ
 Հրաւիրելով ի ներքս աստ ,
 Ի մարդկային մուծանէ խուղ ,
 Վարժեցուցեալ բարուց կակուղ .
 Բզթանկազինն հիւսելով զօդ ,
 Բզհայրենեաց սէր և կարօտ :

Ձեռք գործօնեայք ժիրաժիր ,
 Աշխոյժք կրցին գաշնազիր ,
 Եւ ամենայն դօրութիւն
 Յայտնի շարժմամբք եռանդուն :
 Յազատութեան սուրբ ծոց՝ հանգէտ
 Կան աշակերտ և վարդապետ .
 Անձնիւր ունի զիւրքն տեղի
 Եւ ի բրուանց որ ոչ նեղի :
 Քաղաքացեաց վաստակքն են պարծք
 Եւ օրհնութիւնք՝ ճրգանցրն վարձք .
 Իշխանութիւն պատուէ զարքայ ,
 Պատուեն և զմեզ ձեռք գործօնեայ :

Խաղաղութիւն տենչալի ,
 Չայնակցութիւն տարժալի ,
 Սփռեցէք հաշտ հովանիս
 Ի բնակութիւն քաղաքիս :
 Իցիւ չծագէր երբեք այն տիւ ,
 Յորում՝ դաժան ջուկք մարտակոխ
 Դիմեալ զային բանսարկու
 Եւ յայս հովիտ անդորրու .
 Եւ ոչ երկինք՝ զոր երեկոյն
 Պըճնէր համբոյր կարմիր ի գոյն ,
 Ճառագայթէր զարհուրագին
 Ի ծուխ շինից եւ քաղաքին :

Փլուզէք ինձ արդ զայդ դարիճակ ,
 Ձի քաջ լըցաւ իւրըն վաստակ .
 Չըւարճասցին աչք և սիրտ արդ
 Ի տես գործոյս գեղեցկաւարտ :
 Կոփկոփեսցէ ուռն անդադար
 Մինչև պայթեալ ձուլոյն պատուար ,
 Փչրեսցի ձեւն անպիտան ,
 Ու ելցէ զանգակն յերեւան :

Բզգոյճ ձեռամբ՝ կարէ ճարտար
 Փչրել ի գէպ ժամու զկողպար .
 Այլ վայ , թէ չև պաղեալ համակ՝
 Պղինձըն գերծցի բոցավրտակ :
 Շանթիւք ճոյթմամբ խօշականաւ
 Պայթուցանէ զտուն շուրջ զիւրաւ .
 Իբր ի վըհիցըն սանդարաց

Շրջացանեալ հուր ու աւերած :
 Ուր ոյժք անփորձք ճրգնին յահուր՝
 Անդ կերպարանք խնդրին ի զուր .
 Ուր ժողովուրդք սղիկամիք ,
 Ձիք անդ վայելք բարեբաստիկ :

Վայ , թէ ի ծոցըս քաղաքի
 Գրգիռ տըժգոհ զազտ ճարակի .
 Դրդեալ ամբոխն՝ ապերասան ,
 Ճրգնի ուժգին կալ ինքնիշխան .
 Ի բուռն առեալ զանգակին լար՝
 Պահանջէ ձայն վրդովարար ,
 Բզնըւիրեալն առ հաշտութիւն՝
 Ի զինաշարժ փոխել զանչիւն :

Ազատութիւն և զուգութիւն .
 Այս ընդհանուր լսի գոչիւն .
 Խուռն ՚ի փողոցս և հրատարակ ,
 Խաղաղակեացք դիմեն բընակք .
 Շուրջ յածին հէնք հեղիչք արեան ,
 Կանայք կըտղեալք իբր ըզբորեան՝
 Անխիղճ յոճիրս համարձակ
 Եւ յեղերունս ձեռնարձակ ,
 Յովազաբար մոլին անխիրտ
 Բզթըշնամոյն պատառել սիրտ :
 Ի սրբութեանց չըկան պատկառ ,
 Եւ ոչ յահէ ուստեք ոտնառ .
 Անդ տայ տեղի լաւըն չարին
 Եւ մոլութիւնք ազատ վարին :
 Չարթուցանել ահ է զստիւժ ,
 Կամ ըզվազեր գրգռել զայրուց .
 Այլ չիք խէթ մեծ երկեղի ,
 Քան ի մարդոյ կատաղի :
 Վայ որ զերկնից լուցեալ լապտերո՝
 Մըշտակուրաց տացեն ի ձեռու .
 Ոչ ծագեսցէ լոյս՝ այլ հրդեհ ,
 Յաճիւն դատել ըզչէն և դեհ :

Աստուածային հրճուանք անճառ .
 Տես իբր հանգոյն աստեղ պայծառ
 Ի պատենէն ոստչի փայլուն ,
 Մետաղըն ջինջ և լըպըրծուն :
 Ի կատարէն ցըչըրջանակ
 Արեգական ցոլայ գունակ .
 Եւ ըզքաջ հնարըս ճարտարին
 Նուրբ զինանշանքն այն բարբառին :

Եկայք մըտէք , արդ ով ընկերք ,
 Շուրջ բոլորեալ ակումբ առէր ,
 Ի զանգակիս մըկըրտութիւն .
 Կոչեսցի նա ՁԱՅՆԱԿՑՈՒԹԻՒՆ .

Միաձառանս և միաձարթ
Զօգեւ խրմբել զէնքն զբարթ :

Յայսմէտէ այս պաշտօն նորին ,
Յոր սակս ետեղծ ձեռք ճարտարին .
Զերկրակենցաղ թողեալ կայան՝
Յերկնից կապոյտն հասցէ խորան ,
Աստեղատանց գոլ գրացի ,
Ու ի խռան շանթից շարժեսցի .
Տացէ բարբառ ի բարձանց ,
Հուլիցն հանգոյն լուսապանձ ,
Որք զարարիչն օրհնեն 'ի պար
Եւ զամն ամեն պսակահամբար :
Յանկ առ վրսեմն և յարակայ
Բացցի բերանըն մետաղեայ .
Եւ զփախըստեայն ժամանակ
Կալցէ առ մէն ժամ երազ :
Լիցի թարգման և բախտին ժիր .
Այլ և անգութ ու անկարեկիր՝
Տատանաչարժ իցէ ընկեր
Փոփոխական կենաց թատեր :
Եւ ուսուսցէ թէ որպէս ձայն ,
Որ ի նմանէն՝ ցրբուի յունայն՝ ,
Այսպէս մնայուն ինչ չիք բնաւին ,
Ու ամեն երկրայբքս յապաւին :

Արդ զօրութեամբ ձիգ պարանայ
Հանէք ի գբոյ զզանգակն ի բաց .
Ի գահ ձայնից ամբարձցի՝ վեր
Ոյորտանալ յօգս և յայեր :
Հա՛ քարչեցէք , քարչեցէք եւս :
Ահա կախեալ ճօճայ թեթեւ :
ԽԱՂՂՈՒԹՈՒՆ՝ նախն իցէ ձայն ,
Եւ ցնծասցէ քաղաքս համայն :

ՇԽԱԷՐ :

ԳԵՐՄԱՆԱՅԻ ԶՕՐԱՎԱՐԳ

Անցեալ տարուան պատերազմին առ-
թիւ առանձինն խօսած ըլլալով օրա-
գրիս մէջ մէկ քանի զաղղիացի ու գեր-
մանացի նշանաւոր զօրավարաց վրայ ,
այս անգամ կ'ընծայենք 'ի տես ընթեր-
ցողաց Գերմանիոյ նիզակակից բանա-
կաց զօրավարներէն ոմանց կենդանա-
ղիրը , տալով միանգամայն համառօտ

տեղեկութիւն մը անոնց խրաբանչիւ-
րին վրայ :

Կուստանդին Ալվէնյէպրևի . — Ծնաւ
յամին 1809 , և իւր առջի զինուորա-
կան կրթութիւնը ազատորդի ինքնա-
կամ զինուորելոց (cadets) խմբին մէջ
կատարեց , և ետքը ինքնակալ Ալէք-
սանդր կոչուած Բրուսիացի զնդին (re-
giment) մէջ մտաւ իբրև սպայ . 1858էն
մինչև 1860 զօրաբանակի (corps d'Ar-
mée) զլուխ եղաւ : Յամին 1864 բար-
ձրագոյն զօրավարի (major général)
աստիճանին հասաւ , և միանգամայն
պահանորդ հետեակազօրուն երկրորդ
ջոկատին հրամանատար դրուեցաւ :
Աւստրիոյ դէմ տրուած կռուոյն մէջ յա-
մին 1866 պատերազմեցաւ 'ի Սօր և 'ի
Սատովա , և ետքը տեղապահ զօրավար
(lieutenant général) անուանեցաւ : Ան-
ցեալ տարուան պատերազմին մէջ ալ
Սերբերէնի բարձանց վրայ եղած կռու-
ոյն մէջ շատ նշանաւոր հանդիսացաւ :

Գուշիէյմուս Թիւմբշիևի . — Բարձրա-
գոյն զօրավարի պաշտօնիւ յամին 1864
Տանիմարքայի կռուոյն մէջ մտաւ : Աւս-
տրիոյ դէմ տրուած պատերազմին մէջ ,
յամին 1866 , ինքը որոշեց կիղզինի
յաղթութիւնը , ուր ժանր կերպով վի-
րաւորեցաւ , և 1868ին հեծելազօրուն
զօրապետ անուանեցաւ :

Հուկոն Եղուարտ Քիրխպախ . —
1866 տարուոյն պատերազմին Նաչատի ,
Շքալիցի ու Շըվայնշատէլի արիւնա-
հեղ կռուոց մէջ հետեակազօրուն տաս-
ներորդ զօրաբաժնին կը հրամայէր , և
մասնաւորապէս այս կռուոց առջինին
մէջ շատ արդիւնք ունեցաւ զինուոց բազ-
ղը Բրուսիոյ կողմ շրջելով . ինչպէս ան-
ցեալ տարուոյն պատերազմին մէջ ալ
մեծապէս ձեռնտու եղաւ վայսէմ-
պուրկի և վէօրթի յաղթութեանց մէջ :

Յուշիոս Պոզ : — Վերջին պատե-
րազմին մէջ տեղակալ զօրավար ա-
նուանուեցաւ և հրամանատար Բրու-